ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԶՈՐ ԱԶԴԱԿ

ԼԻԱ ՔԱՌՅԱՆ

ՍՍՀՄ-ում և սոցիալիստական համագործակցության մյուս երկրներում սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման փորձը համոզիչ կերպով վկայում է, որ մրցությունը եղել և մնում է որպես արտադրողական ուժերի վերելքի, արտադրական հարաբերությունների կատարելագործման, մասսաների ստեղծագործական նախաձեռնության զարգացման, նրանց կոմունիստական գիտակցության ոգով դաստիարակելու կարևոր ազդակ։ Սոցիալիստական մրցության ակունքների մոտ կանգնած էր Վ. Ի. Լենինը։ «Լենինի տեսական ստեղծագործության պսակը հանդիսացավ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման ուղիների մասին նրա ստեղծած գիտությունը»[1], որի մեջ կարևոր տեղ է պատկանում նաև սոցիալիստական մրցությանը։

Կուսակցության XXV համագումարին ԿԿ-ի հաշվետու զեկուցման մեջ Լ. Ի. Բրեժնևն ընդգծել է. «Մենք ամենքս ուրախանում ենք, թե ինչպիսի խոր արմատներ են արձակել սոցիալիստական մրցության լենինյան գաղափարները։ Մենք հպարտանում ենք, որ մրցության ավանգարդում ընթանում են կոմունիստները։ Մրցությունը խոր ազդեցություն է գործում տնտեսական պրակտիկայի վրա, երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա, բարոյական մթնոլորտի վրա։ Այսուհետև ևս համակողմանիորեն զարգացնել սոցիալիստական մրցությունը, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի շարժումը՝ այսպիսին է մեր ընդհանուր մարտական լոզունգը»[2]։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները մրցությունը համարել են սոցիոլոգիական կատեգորիա։ Նրանք ցույց են տվել, որ մասնավոր սեփականատիրության պայմաններում մրցությունը ստանում է մրցակցության այլանդակ կերպարանք։ Կապիտալիզմի ժամանակ, ասել է Կ. Մարքսը, «այն, ինչ բնորոշ է կենդանուն, դառնում է մարդու բախտաբաժինը, իսկ մարդկայինը վեր է ածվում այն բանի, ինչը բնորոշ է կենդանուն»[3] և որ սոցիալիզմի՝ «մարդկությանն արժանի հասարակարգի»[4] ժամանակ միայն մրցությունը կդրվի մարդկային հիմքի վրա։

Մրցության մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարները պատմական նոր պայմաններում զարգացրեց Վ. Ի. Լենինը։ Իր աշխատություններում Վ. Ի. Լենինը ցույց տվեց սոցիալիստական մրցության աղբյուրները, նրա

---

1 *«Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան 110-րդ տարեդարձի մասին ՍՄԿԿ կենտկոմի որոշումը», Երևան, 1980, էջ 2։*

2 *«ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 115։*

3 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, с. 564.

4 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. I, с. 562.

էությունը և բովանդակությունը, սկզբունքային տարբերությունը մրցակցությունից, ձևակերպեց նրա կազմակերպման կարևորագույն սկզբունքները։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ սոցիալիստական մրցության օբյեկտիվ հիմքը կազմում են սոցիալիստական արտադրահարաբերությունները։ «Միայն սոցիալիզմը, ոչնչացնելով դասակարգերը և, հատկապես, մասսաների ստրկացումը, առաջին անգամն է, որ ճանապարհ է բաց անում մրցության համար իսկապես մասսայական մասշտաբով»[5]։ Մերժելով բուրժուական տեսաբանների այն պնդումները, որ իբր թե սոցիալիզմի պայմաններում մրցության համար տեղ չկա, Վ. Ի. Լենինը նշել է. «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներդրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[6]։

Վ. Ի. Լենինը մշակեց մրցության գլխավոր կազմակերպչական սկզբունքները. հրապարակայնությունը, համեմատելիությունը, աշխատանքի լավագույն օրինակները մասսայական չափերով կրկնվելու հնարավորությունը և այլն։ Հրապարակայնության էությունը, լենինյան ըմբռնմամբ, ոչ թե այն է, որպեսզի ձևականորեն «հրապարակայնացվի» պարտավորությունը, պայմանագիրը, կոչը կամ նախաձեռնությունը, այլ այն, որպեսզի հնարավոր դառնա մրցության ամեն մի մասնակցի զինելու բոլոր անհրաժեշտ տեղեկություններով գիտության, տեխնիկայի նորագույն նվաճումների մասին, առաջավոր փորձը ներդնելու համապատասխան ճյուղի արտադրության մեջ, ինչպես նաև հասարակայնությանը իրազեկելու մրցության մասնակիցների ձեռք բերած նվաճումների վերաբերյալ։ Իսկական մրցություն չի կարող լինել առանց օրինակների ցուցադրման, առանց դրական օրինակի, որին պետք է հավասարվել[7]։

Սոցիալիստական մրցության արմատական սկզբունքը տարբեր կոլեկտիվների և առանձին աշխատողների ձեռք բերած արդյունքների համեմատելիությունն է։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ սոցիալիստական մրցության էությունը հանգում է այն բանին, որպեսզի առաջավորների փորձը դառնա բոլորի նվաճումը, որպեսզի ձեռք բերվի մասսաների ընդհանուր վերելք՝ առաջավորների մակարդակին համապատասխան։ Մրցություն վարել, ընդգծում էր Վ. Ի. Լենինը, նշանակում է «ապահովել մեկ համայնքում կատարված փորձի կրկնության հնարավորությունը մյուս համայնքների կողմից, ապահովել փոխանակության հնարավորությունն այն նյութական ուժերի, ինչպես և մարդկային ուժերի, որոնք ժողովրդական տնտեսության կամ պետական կառավարման համապատասխան ասպարեզում իրենց ցուցաբերել են լավագույն կողմերով»[8]։

---

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 310։
6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 493—494։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 310—311։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 245։

Վ. Ի. Լենինը ոչ միայն մշակեց մրցության գլխավոր կազմակերպական սկզբունքները, այլև ցույց տվեց դրանց կլասիկ կիրառումն առաջին կոմունիստական շաբաթօրյակների պրակտիկայում, որոնց նա վիթխարի նշանակություն էր տալիս։ Կոմունիստական շաբաթօրյակները, գրում էր նա, անսահման արժեքավոր են որպես կոմունիզմի փաստական սկիզբ, քանի որ «Կոմունիզմը սկսվում է այնտեղ, որտեղ երևան է գալիս շարֆային բանվորների անձնվեր, ծանր աշխատանքը հաղթահարող հոգսը՝ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, պահպանելու յուրաքանչյուր փութ հացը, ածուխը, երկաթը և այլ մթերքներ, որոնք հասնում են ո՛չ թե անձնապես աշխատողներին և ո՛չ թե նրանց «մերձավորներին», այլ... ամբողջ հասարակությանը, տասնյակ և հարյուր-միլիոնավոր մարդկանց...»[9]։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական մրցության մեջ տեսնում էր սոցիալիստական և կոմունիստական շինարարության ոչ միայն տնտեսական, այլև սոցիալ-քաղաքական և բարոյաէթիկական խնդիրների լուծման հզոր միջոց։ Այսպես, խոսելով կոմունիստական շաբաթօրյակների մասին, Վ. Ի. Լենինը շեշտված ուշադրություն էր դարձնում այն բանին, որ «նրանք մեզ ցույց են տալիս բանվորների գիտակցական և կամավոր նախաձեռնությունն աշխատանքի արտադրողականության զարգացման մեջ, նոր աշխատանքային կարգապահության անցնելու, տնտեսության և կյանքի սոցիալիստական պայմաններ ստեղծելու մեջ»[10]։

Վ. Ի. Լենինը շաբաթօրյակները բնութագրում էր որպես աշխատավորների մեծ նախաձեռնություն, կոմունիստական աշխատանքի նախատիպ, «կոմունիզմի փաստական սկիզբ»[11]։ Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի հասկացության տակ Վ. Ի. Լենինը հասկանում էր գիտակցականության, կազմակերպվածության և կարգապահության բարձր մակարդակ։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորումը ոչ միայն մարդ-աշխատավորի դաստիարակումն է, այլև կազմավորումն է նոր կոմունիստական բարոյականության, որի հիմքում ընկած են իսկական կոլեկտիվիստական հարաբերությունները և հարգանքը աշխատանքի մարդու և կոմունիստական գաղափարայնության, գիտակցականության նկատմամբ։ Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրություն էր դարձնում գիտակցական կարգապահության դաստիարակությանը։ «Հասարակական աշխատանքի կոմունիստական կազմակերպումը, դեպի որը տանող առաջին քայլը սոցիալիզմն է,— գրում էր նա,—հենվում է և գնալով կշարունակի ավելի հենվել աշխատավորների ազատ և գիտակցական կարգապահության վրա»[12]։

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակումը կուսակցության գաղափարական աշխատանքի գլխավոր ուղղություններից մեկն է զարգացած սոցիալիզմի փուլում։ ՍՄԿԿ XXV համագումարի

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 524։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 519։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 524։
12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 513—514։

փաստաթղթերում լենինյան գաղափարների հիման վրա հստակորեն ձևակերպված է կոմունիստական գաղափարայնության էությունը, որպես գիտելիքների, հմտությունների և պրակտիկ գործունեության համաձուլվածքի[13]։ Նոր մարդու ձևավորումը իր հիմքում առաջին հերթին հենց աշխատանքի, մասնագիտական պարտականությունների նկատմամբ բոլոր աշխատավորների գիտակցական, պատասխանատու վերաբերմունքի դաստիարակումն է։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ հենց աշխատանքի նկատմամբ նման վերաբերմունքն է իրենից ներկայացնում առողջ օրգանիզմի պահանջմունք[14]։

Հարկ է ընդգծել, որ զարգացած սոցիալիզմի փուլում աշխատանքի՝ առաջին կենսական պահանջմունք դառնալու գաղափարական նախապայմանների նշանակությունն աճում է աշխատավորների ընդհանուր մակարդակին և հատկապես նրանց մարքս-լենինյան կրթության, նրանց կուլտուրայի աճին համատեղ։ «Կոմունիստական աշխատանքը,— գրել է Վ. Ի. Լենինը,—բառիս ավելի նեղ և ավելի խիստ առումով նշանակում է անվճար աշխատանք հասարակության օգտին, մի աշխատանք, որ կատարվում է ոչ թե որոշակի պարհակ կրելու համար, ոչ թե որոշ մթերքներ ստանալու իրավունքի համար, ոչ թե նախապես սահմանված և օրինականացված նորմաներով, այլ կամավոր աշխատանք, նորմաներից դուրս աշխատանք, մի աշխատանք, որը տրվում է վարձատրությունը նկատի չունենալով, առանց վարձատրության պայմանների, մի աշխատանք, որը կատարվում է ընդհանուրի օգտին աշխատելու սովորությամբ և ընդհանուրի օգտին աշխատանքի անհրաժեշտության նկատմամբ գիտակից (արդեն սովորություն դարձած) վերաբերմունքով, մի աշխատանք, որը պահանջմունք է առողջ օրգանիզմի համար»[15]։

Վ. Ի. Լենինը միաժամանակ սովորեցնում էր, որ սոցիալիզմի պայմաններում աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի կազմավորումը ամենևին էլ չի հակադրվում նյութական շահագրգռվածությանը։ Այն ենթադրում է նյութական բարիքների բաշխման և սպառման այնպիսի կազմակերպում, որն աշխատավորին խթանում է դեպի աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն և որակ։ Վ. Ի. Լենինը շարունակ մատնանշում էր, որ միայն խանդավառության վրա սոցիալիզմ չի կարելի կառուցել, որ այն պետք է կառուցել «ոչ թե անմիջականապես խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության... վրա»[16]։

Այսպիսով, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի կազմավորման վերլուծության հանդեպ լենինյան մոտեցումը բնորոշվում է հետևյալ գծերով։ Առաջին, Վ. Ի. Լենինն այդպիսի վերաբերմունքի դաստիարակումը դիտում էր որպես կոմունիստական գիտակցականության ձևավորման կարևորագույն ուղղություն։ Երկրորդ, կուսակցության առաջնորդը խոր և բազմակողմանի կերպով բացահայտեց սոցիալիզմի պայմաններում աշխատանքային գործունեության ազդակների դիալեկտիկան, ընդգծելով

---

13 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութեր», էջ 115։
14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 661։
15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 661։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 46։

զաղափարական մղումների և անձնական նյութական շահագրգռվածության միասնության կարևորությունը։ Երրորդ, Վ. Ի. Լենինն աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորման պրոցեսը քննարկում էր շարժման մեջ, նշում շահագործումից ազատագրված աշխատավորի ստեղծագործական ուժերի նոր և բազմատեսակ ձևերի առաջացման անհրաժեշտությունը։

1950—60-ական թվականների սահմանագլխում սովետական հասարակությունը թևակոխեց իր զարգացման նոր փուլը՝ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանը։ Մեր երկրում ձեռք էր բերվել նոր հասարակության հասունության այնպիսի աստիճան, այնպիսի ստադիա, երբ ավարտվում է հասարակական հարաբերությունների ամբողջ միագումարության վերակառուցումը սոցիալիզմին ներքնապես հատուկ կոլեկտիվիստական սկզբունքների հիման վրա, լիակատար ասպարեզ է ստեղծվում սոցիալիզմի օրենքների գործողության համար, նրա առավելությունների դրսևորման համար՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում[17]։

Զարգացած սոցիալիզմի կարևորագույն առանձնահատկություններից մեկը սոցիալիստական մրցության իսկական համաժողովրդական թափն է, մրցություն, որ դարձել է սոցիալիստական կենսաձևի անքակտելի մասը։ Սովետական հասարակության զարգացման նոր փուլում մրցությանը մասնակցում է պրակտիկորեն ամբողջ բանվոր դասակարգը, կոլտնտեսականների, գիտնականների, ինժեներատեխնիկական աշխատողների ճնշող մեծամասնությունը։

Աշխատավորների ստեղծագործական ակտիվության աննախընթաց վերելքը, պետական գործերի և արտադրության կառավարման մեջ միլիոնավոր նոր աշխատավորների ընդգրկումը պայմանավորել են կոմունիստական կուսակցության դերի հետագա աճը սովետական հասարակության կյանքում, այդ թվում նաև սոցիալիստական մրցության ղեկավարման մեջ։ Սոցիալիստական մրցության կուսակցական ղեկավարումն առաջին հերթին այն է, որ կուսակցությունը սահմանում է սոցիալիստական մրցության հիմնական ուղղություններն ու խնդիրները՝ հաշվի առնելով սոցիալիստական հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլը։ Երկրորդ, կուսակցությունը կոորդինացնում է մրցության կազմակերպման խնդրում պետական և տնտեսական մարմինների, արհմիությունների և կոմերիտմիության գործունեությունը, սպասարկում է կուսակցական կազմակերպությունների և կոմունիստների ղեկավար դերը մրցության բոլոր ուղղություններում։ Երրորդ, կուսակցությունը ստեղծագործաբար զարգացնում է մարքսիստական-լենինյան ուսմունքը սոցիալիստական մրցության վերաբերյալ, այն հարստացնելով տեսական նոր դրույթներով և եզրակացություններով։

Սահմանելով նոր պայմաններում սոցիալիստական մրցության զարգացման քաղաքական գիծը, կուսակցությունը ղեկավարվում է նրա կազմակերպման լենինյան սկզբունքներով՝ հրապարակայնություն, արդյունքների համեմատելիություն, առաջավոր փորձի պրակտիկ կրկնություն։ Այդ սկզբունքները ժամանակակից պայմաններում իրականացվում են նյութատեխնիկական բազայի բարձր զարգացման, գիտատեխնիկական նվաճումների և սոցիալական

17 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, Երևան, 1979, էջ 802—803։

առաջընթացի հիման վրա։ 1936 թ. համեմատությամբ, երբ ՍՍՀՄ-ում քաղաքում և գյուղում հաղթանակեցին սոցիալիստական արտադրահարաբերությունները, 1977 թ. հասարակական համախառն արդյունքի ծավալը աճեց 18 անգամ, էներգազինվածությունը արդյունաբերության մեջ՝ գրեթե 8, իսկ գյուղատնտեսության մեջ՝ ավելի քան 15 անգամ։ Ժողովրդական տնտեսության մեջ այժմ լայնորեն օգտագործվում են ատոմային էներգիան, էլեկտրոնիկան, հաշվողական տեխնիկան, կիսահաղորդիչ նյութերը և ինդուստրիայի այլ ճյուղեր, որոնք 1936 թ. մենք չունեինք[18]։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում ամբողջ ժողովրդական տնտեսության դինամիկ զարգացման, հասարակության սոցիալիստական կազմակերպության առավելությունների հետ գիտատեխնիկական հեղափոխության արդյունքների միավորման հիման վրա հնարավոր դարձավ նկատելի շրջադարձը մարդկանց նյութական և կուլտուրական բազմատեսակ պահանջմունքների՝ գնալով ավելի լիակատար բավարարման հանդեպ։ Աշխատավորների ռեալ եկամուտները 1977 թ., 1936 թ. համեմատությամբ, մեծացան ավելի քան 5 անգամ։ Էապես աճեց սովետական մարդու ընդհանուր կուլտուրան և կրթվածությունը։ Երկրի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում 1977 թ. սովորում էր ավելի քան 10 միլիոն մարդ՝ ավելի քան 7 անգամ շատ, քան 40 տարի առաջ։ Հիմնականում ավարտվել է անցումը ընդհանուր միջնակարգ կրթության։ Հասարակական գիտակցության մեջ կայուն կերպով ամրապնդվել է գիտամատերիալիստական աշխարհայացքը[19]։

Բանվոր դասակարգը, որը կոմունիստական շինարարության առաջատար ուժն է, 1977 թ. հաշվում էր ավելի քան 70 միլիոն մարդ և կազմում էր երկրի զբաղված բնակչության $^2/_3$-ը (այն ժամանակ, երբ 1936 թ. կազմում էր միայն $^1/_3$-ը)։ 1977 թ. բարձրագույն և միջնակարգ (լրիվ և ոչ լրիվ) կրթություն ունեին բանվորների 73,2%-ը, իսկ 40 տարի առաջ՝ 8%-ից էլ պակաս։ Գիտատեխնիկական հեղափոխության ազդեցության տակ աճում է նոր տիպի արտադրող, որի գործունեության մեջ ներդաշնակորեն զուգակցվում է ֆիզիկական և մտավոր աշխատանքը[20]։

Կոմունիստական կուսակցությունը ելնում է այն բանից, որ զարգացած սոցիալիզմի պայմաններում սովետական հասարակության տնտեսության մեջ և սոցիալական կառուցվածքում տեղի ունեցած խորը փոփոխությունները հնարավորություն են տալիս ձեռնամուխ լինելու անմիջականորեն կոմունիստական հասարակարգի կառուցմանը։ Կոմունիստական շինարարության գլխավոր խնդիրները որոշված են կուսակցության ծրագրում. դրանք են՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, կոմունիստական արտադրահարաբերությունների ձևավորումը, նոր մարդու դաստիարակությունը։ Այդ խնդիրները զարգացված և կոնկրետացված են կուսակցության XXIII, XXIV և XXV համագումարների որոշումներում։ Դրանք լուծելիս կուսակցությունը, ինչպես և առաջ, վիթխարի նշանակություն է տալիս սոցիալիստա-

---

18 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 798։
19 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 799։
20 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 800։

կան մրցությանը՝ դեպի կոմունիզմ սովետական ժողովրդի առաջընթաց շարժման հզոր ազդակին։

Նոր փուլում սոցիալիստական մրցության էությունը հասկանալու համար մեթոդոլոգիական կարևոր ուղեցույց է ՍՄԿԿ Ծրագրի այն դրույթը, որ կոմունիստական շինարարության պայմաններում տեղի է ունենում գոյություն ունեցող ձեռնարկությունների կատարելագործում և դրանց վերածում կոմունիստական հասարակության ձեռնարկություններին։ Հենց այդ հիմքի վրա էլ տեղի կունենա ամրցության ծավալումը և գիտության նվաճումների և աշխատանքի կազմակերպման ու արտադրողականության լավագույն օրինակների արմատավորումը. աշխատավորների կոլեկտիվների լայն մասնակցությունը ձեռնարկության կառավարմանը և աշխատանքի կոմունիստական ձևերի տարածումը»[21]։

Սոցիալիստական մրցության գլխավոր ուղղությունները ժամանակակից փուլում հստակորեն սահմանված են «Սոցիալիստական մրցության կազմակերպման հետագա բարելավման մասին» ՍՄԿԿ ԿԿ-ի 1971 թ. որոշման մեջ, որի հիմնական դրույթները հետագայում զարգացվել և կոնկրետացվել են ՍՄԿԿ ԿԿ-ի, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի և ՀամԼԿԵՄ ԿԿ-ի՝ 9-րդ և 10-րդ հնգամյակները ժամկետից շուտ կատարելու համար արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և գյուղատնտեսության աշխատողների համամիութենական սոցիալիստական մրցության վերաբերյալ որոշումներում և նամակներում[22]։ Այդ որոշումներն ուղղություն են տալիս մասսաների ստեղծագործական ակտիվությանը՝ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, արտադրանքի որակը ժողովրդական տնտեսության բոլոր օղակներում, տնտեսելու նյութական և աշխատանքային ռեսուրսները, արագացնելու գիտության և տեխնիկայի նվաճումների արմատավորումն արտադրության մեջ, կոլեկտիվների սոցիալական առաջընթացը։

Զարգացած սոցիալիզմի պայմաններում սոցիալիստական մրցության ծավալուն բնութագիրը տվել է Լ. Ի. Բրեժնևը ՍՍՀՄ արհմիությունների XVI համագումարում արտասանած ճառում. «արդի փուլում սոցիալիստական մրցությունը որակապես նոր գծեր, նոր առանձնահատկություններ է ձեռք բերում։ Այսօր մրցությունն անբաժանելի է գիտատեխնիկական հեղափոխությունից։ Այն ավելի ու ավելի մեծ չափով է կենտրոնացվում արդյունավետության և որակի պրոբլեմների շուրջը։ Այն նպատակամղված է ժողովրդատնտեսական ամենալավ վերջնական արդյունքների ձեռքբերմանը։ Այն ամենասերտ կերպով կապված է հանդիպական պլանների հետ, որոնց մեջ այնպես վառ կերպով արտահայտվում է միլիոնների նախաձեռնությունն ու անձնվեր աշխատանքը... օգնում է ուժերը կենտրոնացնել թերությունները շտկելու, ետ մնացող տեղամասերը առաջ մղելու վրա, նպատակ ունենալով արագացնել ընդհանուր վերելքը»[23]։

---

21 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Երևան, 1962, էջ 497։

22 «КПСС в резолюциях и решениях», т. 10, с. 488—497; «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 9 (1972—1973 гг.), М., 1974, с. 331, 334, 378, 470, т. 10 (1973—1975 гг.), М., 1976, с. 73, 302, 310, т. 12 (1977—1979 гг.), М., 1979, с. 51, 198, 664.

23 Լ. Ի. Բրեժնև, Լենինյան կուրսով, հ. 6, էջ 411—412։

Զարգացնելով առաջին կոմունիստական շաբաթօրյակների, հարվածային բրիգադների, ստախանովական շարժման մասնակիցների աշխատանքային փառավոր ավանդույթները, առաջին հնգամյակների հերոսների գործը, բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի պայմաններում առաջ քաշեց աշխատանքային մրցության այնպիսի ձևեր, որպիսիք են բանվորական էստաֆետները, «հազարականների» շարժումը ածխարդյունաբերության մեջ, հանդիպական պլանները, աշխատանքային յուրաքանչյուր տեղում աշխատանքի արտադրողականության բարձրացման անհատական պլանները, առանց աշխատողների քանակն ավելացնելու արտադրանքի թողարկումն ավելացնելու շչեկինյան մեթոդը, բրիգադային կապալը, տնտեսման անհատական հաշվարկները և այլն։

Ներկա պայմաններում սոցիալիստական մրցության զարգացման բարձրագույն ձևն աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի համար մրցությունն է։ Այդ մրցությունը ծագել է 1958 թ. նոյեմբերին՝ կուսակցության XXI համագումարի որոշումների նախագիծը քննարկելիս։ Նշանակալից է այն, որ այդ հիանալի գործի նախաձեռնողները Մոսկվա-Սարտիրովոչնայա կայարանի դեպոյի կոմունիստներն ու կոմերիտականներն էին, որոնց պապերն ու հայրերը 1919 թ. կազմակերպել էին առաջին կոմունիստական շաբաթօրյակը, որ Վ. Ի. Լենինն անվանեց «մեծ նախաձեռնություն»։

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի համար շարժումը նախապատրաստվել էր սովետական հասարակության ամբողջ անցյալ զարգացման ընթացքով և մասսաների ստեղծագործական նախաձեռնության օրինական արտահայտությունն էր՝ ի պատասխան կուսակցության առաջադրած կոմունիստական շինարարության կարևորագույն խնդիրների։

Սոցիալիստական մրցության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանում գիտության և տեխնիկայի հիման վրա աշխատանքի բարձր արտադրողականության համար մղվող պայքարն օրգանապես զուգակցվում է նոր մարդու՝ իր երկրի տիրոջ, դաստիարակության հետ, մարդ, որը մշտապես նայում է առաջ, ստեղծագործում է, խիզախում։ Մի միասնության մեջ բերելով աշխատանքը, ուսումն ու կենցաղը՝ մրցությունն ազդում է մարդու կյանքի և գործունեության բոլոր կողմերի վրա, դառնալով կարևոր գործոն՝ մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև եղած էական տարբերությունների համահարթման համար։

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի համար մղվող շարժումը բարձր է գնահատվել կոմունիստական կուսակցության կողմից։ Արդեն 1958 թ. նոյեմբերի 19-ին «Պրավդա» թերթը «Կոմունիստական աշխատանքի բրիգադը» վերտառությամբ խմբագրական հոդվածում կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և տնտեսական մարմիններին կոչ էր անում պաշտպանել և գլխավորել աշխատավորների հայրենասիրական նոր նախաձեռնությունը[24]։

Սոցիալիստական մրցության հզոր թափի և ժամանակակից փուլում նրա բարձրագույն ձևի հարաճուն դերի մասին են վկայում հետևյալ տվյալները. 1977 թ. մրցությանը մասնակցում էր 97,5 միլիոն մարդ. դա 22,8 միլիոնով ավելի էր, քան 1972 թ.։ 1977 թ. աշխատանքի նկատմամբ կոմունիստական

---

[24] «Правда», 19. XI. 1958.

վերաբերմունքի համար շարժման մասնակիցների թիվը հասավ 57,8 միլիոն մարդու[25]։

Կոմունիստական աշխատանքի հարվածայինները և կոլեկտիվները լավ օրինակ են ծառայում այն պայքարում, որ մղվում է արտադրության է՛լ ավելի բարձր արդյունավետության հասնելու և աշխատանքի որակը բարելավելու, մասնագիտական վարպետությունը և կուլտուր-տեխնիկական մակարդակը բարձրացնելու, կոմունիստական բարոյականության նորմերը, սոցիալիստական համակեցության կանոնները պահպանելու համար։ Կոմունիստական աշխատանքի կոչման արժանացած արտադրական կոլեկտիվները հանդես են եկել շատ արժեքավոր նախաձեռնություններով՝ գիտատեխնիկական առաջընթացի արագացման, արտադրության հետ գիտության կապի ամրապնդման, նոր տեխնիկայի արմատավորման, աշխատանքի գիտական կազմակերպման և ձեռքի աշխատանքի ծախսումների կրճատման համար ծավալված մրցության մեջ։ Շարժման ազդեցության տակ նշանակալից չափով լայն զարգացում է ստացել բանվորների մասսայական տեխնիկական ստեղծագործությունը։ Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, որոնք անց են կացվել երկրի մի շարք ձեռնարկություններում, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի համար մղվող շարժման մասնակիցների մեջ ռացիոնալիզատորների և գյուտարարների թիվը 3—4 անգամ ավելի է, քան աշխատողների մյուս զանգվածում[26]։

Այժմ սոցիալիստական մրցության կարևոր առանձնահատկություններից մեկը նրա բարձր արդյունավետությունն է։ Միայն կուսակցության XXIV և XXV համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում մրցությունն ապահովել է պլանից դուրս 32 միլիարդ ռուբլու արդյունաբերական արտադրանքի թողարկում, հնարավորություն է տվել տնտեսել 14 միլիարդ ռուբլու նյութական տարբեր ռեսուրսներ[27]։

10-րդ հնգամյակի 3-րդ տարում հանդիպական պլանների և սոցիալիստական պարտավորությունների կատարման շնորհիվ առաջադրանքի համեմատ երկրում լրացուցիչ կարգով կատարվել է 11 միլիարդ ռուբլու արդյունաբերական արտադրանքի իրացում[28]։

Այսպիսով, մասնակցությունը կոմունիստական շաբաթօրյակներին, սոցիալիստական մրցությանը, աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի համար շարժմանը՝ ահա թե ինչպիսիք են ժամանակակից պայմաններում աշխատանքի նկատմամբ նոր վերաբերմունքի դաստիարակության գլխավոր ուղիները։ «Մեծ նախաձեռնությունը», ինչպես և նախատեսում էր Վ. Ի. Լենինը, սոցիալիզմի կառուցման ընթացքում լայն տարածում ստացավ։ Կոմունիստական շաբաթօրյակներն այժմ դարձել են համաժողովրդական։ Մեր «կարմիր շաբաթօրյակների» նպատակները մարդասիրական են և ազնիվ։ 1979 թ., օրինակ, շահագործման հանձնվեց օնկոլոգիական կենտրոնը, որը կառուցվել է 1969 թ. կազմակերպված շաբաթօրյակից ստաց-

---

25 «Материалы XVI съезда Профессиональных союзов СССР», М., 1977, с. 50.

26 «Коммунист», 1979, № 6, с. 31.

27 «XXV съезд Коммунистической партии Советского Союза. Стенографический отчет», М., 1976, с. 129.

28 «Правда», 21.IV.1980.

ված միջոցներով։ 1971 թ. շաբաթօրյակի մասնակիցների աշխատանքային ավանդը ներդրվեց համամիութենական սրտաբանական կենտրոնի կառուցման մեջ։ Մոտ 600 միլիոն ռուբլի վերջին տարիներին տրամադրվել է մանկական նախադպրոցական հիմնարկների կառուցմանը։ 1979 թ. ապրիլյան տոնը դարձավ ինտերնացիոնալ համերաշխության գործողություն՝ դրանից ստացված միջոցները տրամադրվեցին հերոսական Վիետնամին օգնելու ֆոնդին[29]։ Տարեցտարի աճում է կոմունիստական շաբաթօրյակների անմիջական նյութական արդյունավետությունը։

Սովետական ժողովուրդը, կենսագործելով ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումները, նշանակալից առաջընթաց քայլ է կատարել դեպի կոմունիզմ։ 10-րդ հնգամյակի չորս տարիներին երկիրը 600 միլիարդ ռուբլով ավելի արդյունաբերական արտադրանք է ստացել, քան նախորդ հնգամյակի առաջին չորս տարիներին։ Երկրում շարք են մտել ավելի քան 1000 արդյունաբերական նոր ձեռնարկություններ[30]։

Երկրի ժողովրդատնտեսական միասնական համալիրում դինամիկ կերպով զարգանում է նաև Սովետական Հայաստանի տնտեսությունը, գիտությունն ու կուլտուրան։ Ընթացիկ հնգամյակի չորս տարիներին հանրապետությունում ազգային եկամուտն աճել է 32,4%-ով՝ պլանով նախատեսված 27,6%-ի դիմաց, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը, համապատասխանաբար, մեծացել է 35,6 և 32,9%-ով։ Պետական որակի նշանով արտադրանքի տեսակարար կշիռը 1978 թ. համեմատ մեծացել է 30,2%-ով և թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել 15,6%[31]։ Գերակատարվել են երկրագործության և անասնապահության արտադրանքի տեսակների մեծամասնության արտադրության և մթերումների պլանները։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի աճը, միջին տարեկան հաշվարկմամբ, կազմել է 23,8%՝ հնգամյա պլանով նախատեսված 21,1%-ի դիմաց։ Նշանակալից հաջողությունների են հասել հանրապետության ժողովրդական տնտեսության մյուս բնագավառների աշխատողները։ Միջոցառումներ են իրականացվել ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ, մեծ հաջողություններ են ձեռք բերվել գիտության և կուլտուրայի զարգացման ասպարեզում։

Կոնկրետ գործերով պատասխանելով կուսակցության ընդունած որոշումներին, ղեկավարվելով ՍՄԿԿ ԿԿ-ի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևի ցուցումներով, Հայաստանի աշխատավորները 10-րդ հնգամյակի ավարտվող տարին, ՍՄԿԿ XXVI համագումարի ակտիվ նախապատրաստման տարին է՛լ ավելի լայնորեն են ծավալել սոցիալիստական մրցությունը, որը միաժամանակ ընթանում էր նաև Սովետական Հայաստանի և Հայաստանի կոմունիստական կուսակցության 60-ամյակն արժանավայել դիմավորելու նշանաբանով։

Կենսագործելով ՍՄԿԿ XXV համագումարի պատմական որոշումները, Սովետական Հայաստանի աշխատավորները սոցիալիստական մրցության ընթացքում օրերս հասան նոր հաջողությունների։ Նրանք ժամկետից շուտ կատարեցին 10-րդ հնգամյակի առաջադրանքները։ Արդյունաբերական և գյու-

29 Նույն տեղում, 19. IV. 1980։

30 «Սովետական Հայաստան», 20. IV. 1980։

31 «Коммунист», 5. II. 1980.

ղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալի աճի տեմպերով հանրապետությունը ժամկետից շուտ հասավ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1976—1980 թվականների հիմնական ուղղություններով նախատեսված մակարդակին։ 1980 թ. դեկտեմբերի 8-ին հնգամյա առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու և այդ կապակցությամբ Հայկական ՍՍՀ աշխատավորներին ընկ. Լ. Ի. Բրեժնևի հղած ողջույնի առթիվ հանրապետության աշխատավորության ներկայացուցիչների միտինգի մասնակիցները Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորների անունից ՍՄԿԿ Կենտկոմին, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Լ. Ի. Բրեժնևին ուղղած իրենց ողջույնի նամակում հավաստիացրին, որ «Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը, ժողովրդական մտավորականությունը, բոլոր աշխատավորները այսուհետև ևս կգտնվեն կուսակցության առաջ քաշած կոմունիստական շինարարության վիթխարի ծրագրի իրականացման պայքարի առաջնագծում, ՍՄԿԿ XXVI համագումարը կնշանավորեն աշխատանքային նոր մեծագործություններով»[32]։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ—МОГУЧИЙ СТИМУЛ ОБЩЕСТВЕННОГО ПРОГРЕССА

ЛИА КАРЯН

Резюме

Социалистическое соревнование было и остается могучим ускорителем общественного прогресса, закономерностью коммунистического строительства. Будучи важнейшим методом социалистического хозяйствования, оно одновременно является одним из самых действенных средств коммунистического воспитания. Важнейшими особенностями социалистического соревнования на этапе развитого социализма являются его высшая эффективность и массовость. В нем практически принимают участие все трудящиеся нашей страны. Высшим этапом социалистического соревнования в условиях развитого социализма стало движение за коммунистическое отношение к труду, в котором органически сочетаются борьба за достижение на основе науки и техники самой высокой производительности труда с воспитанием гармонично развитого человека.

---

32 *«Սովետական Հայաստան», 9. XII. 1980։*